

2159

Lepidoptera metarhag-ling-leigh
Survey

778.59-

4-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԾ

թիւ

ԱԶԽԱՐՀԻ

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ՄԱՐԴԸ



200

Պայման Հ. Յանձնական

2.011

423

ԱՍՏԵՆԱՆԱՐ ԽԻԱԿԵԱՆ

թիւ 1

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆՔՆ ԳԵՂԵՑԻԿ ՄԱՐԴԸ

(Թ-Թ-ՏՕՒՆ Վ-Վ-Ա-Ջ-Թ-Ի-Ն-Ո)

4-15
ամ



Ա. ԳՈՒՅՆ

Պետական Հայոց թանգարան

1926

27365-4.2

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆՔՆ ԳԵՂԵՑԻԿ ՄԱՐԴԸ

Ոռուաղի Վալանթինօ, աշխարհի ամենէն ժողովրդական շարժապատկերի գերասանն էր։ Եօթը տարի շարունակ, ան տիրեց զանազան ցեղերու, զանազան ազգերու և զանազան գասակարգերու պատկանող միւլիսնաւոր կանացի հոգիներու։ Աշխարհի ստեղծուած օրէն ի վեր, ոչ մէկ Տօն ժուան չէ ունեցած այն յաջողութիւնները, որոնց մէջ կը լողար Վալանթինօ։ Սեւ մազերով, և մութ շաղանակագոյն աչքերով այս խուարցին ունէր խորհրդաւոր ուժ մը, որու ոչ մէկ կին կրնար գիմազրել։ Կուռք մըն էր, որու առջեւ կ'երկրպագէին բոլոր կինները, և շատեր պատրաստ էին իրենց կեանքը զոհաբերելու։ Տակաւին 13 տարի սաաջ սովորական մահկանացու մըն էր, անձանօթ բոլորին։ Իսկ այսօր, անով կը զբաղին աշխարհի բոլոր կինները, աղջիկները, մամուլն ու նանրացին կարծիքը։

Ի՞նչ բանի մէջ կը կայանար այս խորհրդաւոր մարդուն յաջողութեան գաղանիքը, ո՞վ էր, ո՞ւրկէ եկած և ի՞նչպէս ապրած էր...




6322-57

ՈՎ ԷՐ ՎԱԼԱՆԹԻՆՕՆ

»»»

Խուտօրիք Վալանթինօն բնիկ խոտալացի է և 1895ին
ժամանակաշրջին խոտալիս՝ Գառթելլանելթո գիւղին



ԱՐԱՏՈՒՅ ՎԱԼԱՆԹԻՆՕՆ

մէջ՝ նախակրթաբանն ու երկրորդական վարժարանը
աւարտելի յետոյ, յաճախում է ձենողայի երկրա-

գործական բարձրագոյն վարժարանը : Խուտօրիքի
հայրը հանդստեան կոչուած զինուորական անասնաւ-
բոյժ մը, իսկ մայրը Վալանթինօն անուն փրանսուհի
մըն էր : Վալանթինօնի բուն անունն էր Խուտօրիքո-
վալանթինօն Փաֆֆաէլօ Փիէռէ Ֆիլիպէրթի Կոկիէլմի տի-
վալանթինա տՊԱՆԹօնկէլլա:

Ճենուգայի երկրագործական բարձրագոյն վարժա-
րանը աւարտելի յետոյ Վալանթինօն կ'ուզէ Ամերիկա-
երթալ՝ ամերիկեան երկրագործութեան մասին տեղ-
ոյժն վրայ քննութիւն կատարելու . համար : Խու-
տօրիքի հայրը սակայն, բուն կերպավ կը հակառակի
այս ծրագրին : Հակառակ այս զինուորութեան, Խու-
տօրիք կը յաջողի իր ծանօթներէն ճամրու ծախք մը
ճարել և առանց իր ծնողքին լուր տալու, Ամերիկա-
կը մեկնի :

Ամիսի մը չափ անգործ մնալէ յետոյ իր հայրենա-
կիցներուն միջնորդութեամբ կը յաջողի ագարակի-
մը մէջ պաշտօն սահնձնել : Վարանթինօնի երջան-
կութիւնը երկար չի տեսեր սակայն, ագարակին մէջ
ընդունուած օրն իսկ անոր ուշագրութիւնը գրաւած
էր ընդհանուր վերակացուին մանկամարդ աղջիկը,
որ միեւնոյն տեսն քարտուղարի պաշտօն կը վարեր
ագարակին մէջ, իր բնատուր ձիրքերուն չնորհիւ,
Խուտօրիք չարաթ մը յետոյ արգէն զրաւած էր սի-
րուն քարտուղարուէին՝ Օր, Աւիտայի սիրառ : Այս
յաջողութիւնը սակայն, ճակատագրական եղաւ Խու-
տօրիքին, որովհետեւ աղջկան հայրը օր մը յանցանքի
վրայ բանեց սիրակցորդ զոյզը, և իսկոյն վերջ տուաւ
վալանթինօնի պաշտօնին :

Հակառակ Աւիտայի պաղատանքներուն, ան մեր-
ժեց ընդհանուր վերակացուին պայմանները և իր

արժանապատռութիւնը փրկելու համար հեռացաւ
ադարակէն:

Վալանթինո յաճախ կրկնած է, թէ մեծ սխալ մը
գործած էր ազարակէն հեռանալով, որովհետեւ միշտ
երեք ամիս անգործ մնացած և փողոցները զիշերած էր:

23 Օգոստոս 1926 թուակիր նիւ Եորք Թայմզ վա-
լանթինոյի մասին խօսելով ի մէջ այլոց կ'ըսէ. —
«Վալանթինո Պ. ձէյրս Ֆէրրի Ֆուլքով ազարակէն
հեռանալէ յետոյ իր կիանքին ամէնէն թշուառ օրերը
ապրած է: Արժանապատռութեան զգացումը այնքան
զօրաւոր էր անոր մէջ, որ ինքզինքին թոյլ չէր տար
կրկն իր հայրենակիցներուն օժանգակութեան դի-
մել. որոշած էր իր սեփական միջոցներով յաջողիլ
նոր Աշխարհին մէջ, եւ որովհետեւ ազարակէն
վաստուած էր և բարի վարուց վկայական չունէր,
զործ գոնելու նպատակաւ իր կատարած բոլոր դի-
մուները ապարգիւն կը մնային: Այս պայմաններուն
մէջ, անօթութենէ չմնոնելու համար մէկ միջոց միայն
կար. — պարզ զործաւոր բլալ... Թուալֆ համակեր-
պեցաւ բախտին և նիւ Եորքի մեծ ճաշարաններէն
մէկուն մէջ պնակ լուալու պաշտօնը ստածնեց»:

Վալանթինո միշտ լուսթիւն պահած է իր կիան-
քին այս շրջանին մասին: իր մօտիկ ընկերները կը
հաստակեն սակայն, թէ ան յաճախ կ'ըսէր. «Յաջո-
ղութիւններէ երեք չեմ շփանար, որովհետեւ թշ-
ուառութեան բաժակը մինչեւ մրուրը քամած եմ
ժամանակին... երեք չեմ վստահիր ժողովուրդի
դնահատութեան...»:

Որոշ կերպով յայտնի չէ, թէ Վալանթինո ո՛րտ
քան առեն ծառայած է ճաշարանին մէջ: Առաջին ան-
գամ 1917ին է, որ թերթերուն ծանուցումներու.

րաժնին մէջ երեւցած է անոր անունը՝ իբրեւ պարի
ուսուցիչ:

Վալանթինո իր ազատ ժամանակները զուարձու-
թիւններու կը յատկացնէր և այդ առթիւ ծանօթա-
ցած էր կարգ մը աշխարհիկ կիներու և շուայտասէր
երիտասարդներու: Թուալֆի բնական գեղեցկու-
թիւնը շուտով նախանձի առարկայ եղած էր այդ
կիներուն մէջ, որոնցմէ մէկը, Օր. Ճօան Սօրերը,
իսկնթի պէս սիրածարած էր անոր: Օր. Սօրերը, Նիւ
Եորքի երկրորդական թատրոններուն մէջ ներկայա-
ցումներ կուտար և հոչակ հանած էր մանաւանդ իր
օմերկ պարեր»ով: Ամերիկացի գերասանուհին առա-
ջարկով, Վալանթինո կը մտնէ Օր. Սօրերը խումբին
մէջ և գաւառները կը մեկնի՝ զանազան ներկայա-
ցումներ տալու:

Այս ճամբորդութիւններու ընթացքին Վալան-
թինո իր ճարպիկ խաղարկութեամբ մեծ ժողովրդա-
կանութիւն կը շահի ամէն տեղ: Այդ թուականէն
սկսեալ անոր անունը այլ եւս ծանօթ էր Ամերիկայի
բոլոր մեծ քաղաքներուն մէջ: Վալանթինո մէկը
եղած է այն պարողներէն, որոնք «Թանկօն» ժողո-
վը բարգանացուցած և տարածած են ամէն կողմ:

Օր. Սօրերը խումբը օր մը Նիւ Ճըրգի կը գըտ-
նուէր. թերթերը կը ծանուցանէին, թէ Օր. Սօրերը
և Վալանթինո «Եղիմի պար» (մերկ պար) պիտի
պարէին: Ծանուցումները իրենց արդիւնքը ունե-
ցան. թատրոնը ամէն գիշեր մինչեւ բերանը կը
լեցուէր: Վալանթինո և Օր. Սօրերը կը պատրաս-
տուէին Պօսթըն մեկնելու, երբ այցելութիւնը բն-
գունեցին Պ. Կրիֆթ անուն անձի մը:

Պ. Կրիֆթ, որ տէրն էր Լոս Անձէլոսի ամէնէն

մեծ շարժապատկերի գործարանին, առանց յառաջաւաբանի հետեւեալ առաջարկը ներկայացուց.

« Զեր խաղերուն ներկայ եղայ, իբրեւ արուեստէն հասկցող մարդ, կ'ընդունիմ որ մեծ կարողութիւն և ճարպիկութիւն ունիք. կ'ենթագրիմ սակայն, թէ ձեր շահը չի համապատասխաներ ձեր յոդառութիւններուն, հետեւարար կ'առաջարկեմ, որ փոխանակ քաղաքէ քաղաք շրջելու, իմ գործարանիս մէջ աշխատիք իբրեւ շարժանկարի արուեստագէտ, այսպէսով թէ՛ նուազ կը յոդնիք, և թէ անհամեմատ աւելի շատ զրամ կը շահնիք: »

Վալանթինօ առանց վարանելու ընդունեց այս առաջարկը, քաջալերուած ամէն կողմ իր գտած յաջողութիւններէն: Ան վստահ էր թէ շարժապատկերի մէջ ալ պիտի կարենար շուտով լաւ դիրք մը շինել իրեն:

Օր. Սօլերը սակայն, բուռն կերպով հակառակեցաւ այս առաջարկին. ան կը վախնար որ շարժապատկերի ասպարէզին մէջ մտնելէ յետոյ Վալանթինօ կը լքէ զինքը. այս մտահոգութեամբ իր կնոջական բոլոր հնարամտութիւնը ի գործ զրաւ որ Ռուտոլիք և Օր. Սօլերը միջեւ բուռն վէճ մը ծագեցաւ, որու հետեւանքով Վալանթինօ վերջնականապէս լքեց Օր. Սօլերը:

Այսպէսով, Վալանթինօ առաջին քայլը կը նետէր գէպի իր համաշխարհային հոչակը: Պ. Կրիֆիթ խկոյն պայմանագրութիւն մը կնքեց Վալանթինոյին հետ: Այս պայմանագրութիւնով, Ռուտոլիք յանձնն կ'առնէք վեց ամիս, օրական 5 տօլարով աշխատիլ Պ. Կրիֆիթի գործարանին մէջ: Պ. Կրիֆիթ թէեւ վստահ էր վա-

լանթինոյի կարողութեան վրայ, սակայն յարմար զատեց փորձի շրջան մը անցընել և նախ երկրորդական գերեր յանձնեց անոր:

Երեք ամիս յետոյ, Ռուտոլիք արդէն աչքին լոյսն էր Պ. Կրիֆիթի, որ պայմանագրութեան ատենը



ՎԱԼԱՆԹԻՆՈՅ. Օ. «Շեյլափ դերին մէջ

Հլրացած զայն վերանորոգած էր, անշուշտ Վալանթինոյի համար ա՛լ աւելի նպաստաւոր պայմաններով: Վալանթինոյի բարեձեւ հասակը, արտայայտիչ աչքերը, աղնուեական շարժուձեւերը և վերջապէս զօ-

բաւոր «միմիք»ը նպաստած էին որ ան առաջնակարգ դերասաններու կարգը գասուի:

Վարանթինո, առաջին անգամ մասնակցած է Փրցուած Ծաղիկներ (The Broken Flowers) խաղին ուր երկրորդական զեր մը տրուած էր անոր: Հակառակ առոր, ան արակարդ բնգունակութիւն մը ցուց տրուած էր, և շարժանկարի քննադատները առանց վարաներու բուծ էին թէ, «այդ երիտասարդ խոսւացին մեծ ապագայ կը խոստանայ»:

«The four Horsemen of the Apocalypse» (Ավոքադիխոփէ չարս ձիաւորները) խաղին մէջ, Վարանթինո



ԱՎՈՔԱԴԻԽՈՓԷՆՈ՝ «Աւելին և Ռաւզ» խաղին մէջ

այնքան մեծ յաջողութիւն մը ձեռք բերած էր որ այլեւս աօրուան մարդ»ը դարձած էր: Այս խաղը առաջին առտիճանը եղաւ. Վալանթինոցի վասքի սանչ կուխին: Առաջորդի ապագան այլեւս առաջնովուած

էր: ամէն կողմէ նպաստաւոր առաջարկներ կը տեղային անոր, բոլոր չարժանկարի ընկերութիւնները կ'աշխատէին անոր գործակցութիւնը ապահովել: Վալանթինո հաւատարիմ միաց իր խոսուումին և չբաժնուեցաւ Պ. Կրիֆիթէն, որովհետեւ ան էր որ զինքը զէպի յաջողութիւն տարած էր: Պ. Կրիֆիթի Լու Անձէլոսի գործարանին մէջ ան աշխատեցաւ շարունակ երեքուկէս տարի: Այդ շրջանին՝ խաղոց Արիւն և Աւազ (Blood and Sand), Պ Պօքէո (Monsieur Beaucaire), Շէյլ Ահմէտ (The Chéik)ի նման խաղեր, որոնք այնքան հոչակաւոր դարձուցին զինքը:

Պ. Կրիֆիթի հետ իր կնքած պայմանագրութիւնը աւարտելէ յիսոյ, ան միջոց մը քաշուեցաւ տապարէցէն, և սրոշեց վերսարին ազարակապանութեամբ զրազիլ: Այս նպաստակով ամուսնացաւ. իր նախկին ծանօթներէն Օր. Ժան Էքքըր անուն ամերիկացի գերասանուհի մը հետ: Վալանթինոցի այս երջանակութիւնն ալ կարձատեւ եղաւ, և երեք ամսուան կենակցութենէ մը յիսոյ Տիկին Վալանթինո դաստրան զիմելով, ապահարզան պահանջեց: Ամերիկացի գերասանուհին շահնեցաւ իր գատը, հաստատուած ըլլալով որ Վալանթինո «անդթութիւններ» կը գործէր իր կնոջ հանգէալ:

Հաղիւ բաժնուած էր իր կնոջմէն, երբ Վալանթինո ամուսնացաւ. ամերիկացի միլիոնատէրի մը հոգեզաւակին՝ Օր. Աւինիֆրէտ Հրտնէթի հետ, որ «Նաչա Բամպօվա» անունով ծանօթ էր իբրեւ գրագէտ և նկարիչ: Վալանթինո մօտաւորապէս երեք տարի ապրեցաւ իր բանաստեղծ կնոջ հետ, սակայն վերջերս գատարանին որոշումով անիէ ալ բաժնուեցաւ. Դժգոհը դարձեալ կինն էր, որ գոնփակ նիստի

մը մէջ իր ամբաստանութիւնները պարզեց գատաճ-
ուրներուն, և յաջողեցաւ ամուսնալուծման որոշում
ձեռք բերել:

Այս երկրորդ խորհրդաւոր ապահարդանէն յետոյ, Վալանթինո Փարփիզի մէջ աւխուած էր այլիւս չա-
մուսնանալ, իր բարեկանները զիտել տուած էին թէ
«Վալանթինո մը գատաճարաւուած է, միշտ ամուսնա-
նալու», Խուստօֆի հակառակը պնդերու ուժ չէր զգա-
ցած իր մէջ, միայն գրաւիթրունուած էր որ մինչեւ
1930 թուականը չպիտի ամուսնանար:

Իր երկրորդ կնոջմէն բաժնուելէ յետոյ, Վալան-
թինո 1924ին կրկին Ամերիկա մեկնեցաւ և վերստին-
նուիրուեցաւ շարժանկարին: Երկու երեք ամիս յե-
տոյ զրոյց շրջնեցաւ թէ, ան նշանուած է շարժանկարի
ծանօթ աստղերէն Փոլա Նէկրիփ հետ: Այս մասին-
իրեն ուղղուած հարցումի մը պատասխանելով, Վա-
լանթինո յայտարարած է թէ, այդ տեսակ մուա-
գրութիւն մը ունի, բայց 1930ւն առաջ չպիտի ա-
մուսնանայ: Ոչ ոք կրնայ բսել թէ Վալանթինո
պիտի կարենա՞ր յարգել իր այս խոսաւումը: Զինքը
մօտէն ճանցողներն անգամ կը վարանին վճռական
կարծիք մը յայտներու: Ամէն պարագայի մէջ, անա-
կընկալ և վաղանաս մահը, բոլոր ծրագիրները ջուրը-
ձգեց: Վերջին անգամ ան տարեկան 100 հազար
սթէրլին կը շահէր:

Հակառակ անոր որ երկու անգամ ամուսնացած և
երկու անգամին ալ զժրախտ եղած էր, Վալանթինո
ճակատագրականօրէն չէր կրնար հեռու: Թալ կիններէն:
Բնութիւնը զայն ստեղծած էր սիրելու և սիրու-
լու համար: Թերեւս այդ էր պատճառը, որ ան չէր
կրնար իր սէրը մէկ կնոջ վրայ կեզրոնացնել, և

շարունակ նոր ծաղիկներ կը փնտռէր՝ հիւթ քաղե-
լու համար:

Վալանթինո գիտէր թէ միլիոնաւոր կիններու պաշ-
տամունքին առարկան էր: Իր երկրորդ ամուսնալու-
ծումէն յետոյ, ան ամէն օր հարփւրաւոր նամակներ-
կը ստանար, որոնք ամուսնութիւնան զանազան առա-
ջարկներ կը պարունակէին: Սինէմայի գլխաւոր
աստղերն անգամ, կ'ուզէին տիրանալ անոր: այս
առթիւ նոյն իսկ բուռն վէճ մը ծագած էր Փոլա
Նէկրիփ և Նազիմովսայի միջեւ: Աշխարհանոչակ այս-
երկու արուեստագէտներուն միջեւ պայքարը այնքան
սուր բնոյթ մը ստացած էր որ Վալանթինո ստիպ-
ուեցաւ միջամտել և իր ընարութիւնը ընել: Ուու-
տովի նախասիրութիւնը կը հակեր Փոլա Նէկրիփ
կողմէ: Անմիջապէս որ տեղեկացաւ Վալանթինոյի
որոշումին, Օր. Նազիմովսա պաշտօնապէս յայտա-
րարեց թէ, այլիւս երեք չպիտի մասնակցի Վալան-
թինոյի խաղերուն: Այս պատճառով է որ ան չեղեալ
համարեց Պ. Կրիֆիթի հետ կնքուած պայմանագրու-
թիւնը, որով յանձն առած էր Վալանթինոյի հետ
գլխաւոր գեր մը ստանձնել Պ. Պօքէու: Փոքէու փիլմին մէջ:

Փոլա Նէկրիփ սակայն, իսկոյն օգտուեցաւ ասի-
թէն և պատրաստակամութիւն յայտնեց Նազիմով-
սայի գերը ստանձնելու, այսպէսով, Վալանթինոյի
հետ ան պատրաստեց Պ. Պօքէու, որ այնքան մնձ-
յաջողութիւն գտաւ ամէն կողմէ:

Այդ թուականէն սկսեալ, Փոլա Նէկրիփ և Վա-
լանթինոյի միջեւ յարաբերութիւնները ալ աւելի
սերտ բնոյթ մը ստացան, և վերջապէս Վալանթինո
խոսացաւ նշանուիլ Փոլա Նէկրիփ հետ: Վագանաս-
մահը սակայն, այս ծրագիրն ալ ջուրը ձգեց:

Ի՞ՆՉՊԷՍ ՀԻՒԱՆԴԱՑԱԻ

Օգոստոսին սկիզբները, վալսնթինօ մկանած էր
առկարութեան նշաններ զգութ: Բժիշկներու խորհուր-
դին վրայ, Նիւ Եորքի Փօլիքլինիք հիւանդանոցը



ՓՈԼ. ՆԵԿՐԻ
Վալանքինոմի անմիտրար նշանածը

Վիստագրուեցաւ բժշկական գործողութեան մը հն-
թարկուելու համար: Բժշկական քննութիւնը հաս-
տատած էր, որ ան կը տառապէր ափանտիսիթէ, և

Ստամոքսային լոցէ (gastric ulcer): Նիւ Եորքի
ամէնէն կարող մասնագէտ բժիշկները Պ. Պ. Փոլ Տըր-
համ, Հարօլտ Միքըր և Բուտոլֆ Միննինկի բոլոր
ջանքերը ապարդիւն մնացին:

Վալանթինոյի հիւանդանոց վիստագրուիլն ու
գործողութեան ենթարկուիլը օրուան կարեւորագոյն
գէպքը կը նկատուէր ո՞չ միայն Ամերիկայի, այլ և
Եւրոպայի մէջ: Ամերիկայի ամէն կողմէն ամէն օր
հազարաւոր անձեր հիւանդանոց կ'այցելէին «աշ-
խարհի ամէնէն գեղեցիկ մարզուն առողջական վի-
ճակին մասին տեղեկութիւն առնելու համար: Անո-
զումը այնքան սաստիկ էր, որ բժիշկները որոշեցին
փակել հիւանդանոցին բոլոր գուաները: Ասկէ զատ
սատիկանութենէն օգնական ուժ պահանջեցին, ժողո-
վուրդը ցրուելու համար:

Հիւանդանոցի մնօրէնութիւնը ամէն վայր-
կեան հազարաւոր հեռագիրներ և նամակներ կը
ստանար, որոնց պատասխանելու համար մասնաւոր
սպասարկութիւն մը հաստատած էր: Միեւնոյն ատեն
հիւանդանոցին առաջին յարկը տեղեկատու գիւան
մը հաստատած էր՝ Վալանթինոյի առողջական վիճա-
կին մասին ամէն ժամ տեղեկագիր հրատարակելու
և զիմում կատարողներուն պատասխանելու համար:
Թերթերու թղթակիցներն ալ օրը օրին աշխարհի
ամէն կողմը կը հեռագրէին Վալանթինոյի առողջա-
կան վիճակին տեղեկագիրները:

ԻՆՉՊԷՍ ՄԵՌԱԿ

Այսպէս, համաշխարհային հետաքրքրութեան մէջ մեռաւ գեղեցիկ վալանթինօն։ Այրուած արուեստագէտին մահուան անկողնին շուրջ խմբուած էին Սինէմայի զլիսաւոր ստողերը, Նօրմա Թալմաճ, Շարլօ, Տուկլաս Ֆայարէնքս, Մէրի Փիքֆօրտ, և ուրիշ արուեստագէտներ։ Փոլա Նէկրի չէր կրցած իր նշանաձին քով գտնուիլ, որովհետեւ նոր ֆիլմի մը պատրաստութեամբը զբաղած էր Հօլիվուտի մէջ։

Մինչդեռ Վալանթինօ իր հոգին կ'աւանդէր, հիւանդանոցին դրօշը կամաց կամաց վար կ'առնուէր՝ դուրսը խոնուած բազմութեան ծանուցանելու համար մեծ գոյցը։ Նոյն վայրկեանին, զանազան շարժանկարի զործիքներ, կ'առնէին մեռնող Վալանթինոյի, և անհամբեր ամբոխին նկարները։

Վալանթինօ մեռաւ հանդարտ մահով մը, և իր զիտակցութիւնը կարսնցուցած վիճակի մէջ։ Անոր մահը մեծ յուզում պատճառեց Ծուտոլֆի միլիոնաւոր սիրահարներուն։ Փոլա Նէկրի երբ ստացաւ բօթաբեր հեռագիրը, նուազեցաւ։ Շատ գծուար եղաւ ուշքի բերել դայն։ Երբ իր աչքերը բացաւ, Վալանթինոյի նշանածը։

— «Ծուտոլֆս, միակ և վերջին սէրս...» ըստ և կրկին նուազեցաւ։ Նոյն իրկունն իսկ ան Նիւ Եորք մեկնեցաւ՝ անձամբ հսկելու համար իր սիրականին յուղարկաւորութեան հանդէսին։

ՍԻՆԷՄԱՅԻ ԶՈՂ

Վալանթինոյի վաղաժամ մահը արդիւնքն էր տարապայման աշխատանքի։ Ամերիկեան թերթերը այս առթիւ հետեւեալ տեղեկութիւնները կուտան։

Ելեկտրական զօրաւոր լոյսը, որուն տակ կ'աշխատին չարֆանկարի արուեստագէտները, կը տկակացնէ անոնց ջղային դրութիւնը։ Մասնաւորաբար Վալանթինոյի նման զլիսաւոր գերասաններ ստիպուած են աւելի երկար ատեն մնալ ելեկտրական զօրաւոր լոյսերու տակ։ Զօրաւոր ելեկտրականութիւնը ազգած և տկարացուցած է Վալանթինոյի սիրտն ու ջղային դրութիւնը, որու հետեւանքով ծաղիկ հաղիկ հասակին մէջ մեռաւ կիներու պաշտելի գերասանը։ այս պայմաններուն մէջ, բժիշկներն իսկ զայն սինէմայի զոհ մը կը նկատեն։

Եթէ հաւատանք շրջան ընող զրոյցներուն, Վալանթինօ սինէմայի զոհ մըն է, կը նշանակէ, որ ան չպիտի մեռնէր, եթէ սինէմայի հետեւած չըլլար։ Արգեօք Պ. Կրիֆիթ երբեք խզմի խայթ չունենա՞ր զայն սինէմայի ասպարէզին մէջ նետած ըլլալուն համար։

Ճիշդ է, որ Վալանթինօ իր ասպարէզին չնորհիւ միլիոններ շահած է, սակայն կասկած չկայ, որ ան նոյնքան մեծ յաջողութիւն պիտի ունենար իբրեւ մարզիկ, և թերեւս տակաւին պիտի ապրէր։ Արդարեւ, Վալանթինօ առաջնակարգ սփօրթմէն մընէր։ Սինէմայի հետեւելէ առաջ, ան զանազան քա-



զաքներու մէջ կռփամարտի մրցումներ կատարած և
միշտ յաղթական հանդիսացած է։ Օր մը, Շիքակօ¹
Թրիպիլն գրած էր, թէ Վալանթինո պատճառ եղած
է, որ երիտասարդները կիներուն նման բրինձափոշի
և ներկ գործածեն։ Ծուտովֆ, այս տողերը կարդա-
լուն պէս, խմբագրատուն վազած և կռփամարտի
հրաւիրած է յօդուածագիրը։

Մեծ գժուարութեամբ կարելի եղած է հանդար-
տեցնել խոալացի երիտասարդը։

ԿԻՆԵՐ ԱՆՁՆԱՍՊԱՆ Կ'ԸԼԼԱՆ

Ամերիկայի զանազան քաղաքներուն մէջ բազ-
մաթիւ կիներ և աղջիկներ նուազած են՝ Վալանթի-
նոյի մահուան լուրը կարդալով։ Խոկ լոնտոնի մէջ
անձնասպան եղած է երիտասարդ գերասանուհի մը
միս Փէճի Սքօթ։

Տէլլի Մէլլ հետեւեալ մանրամասնութիւնները կու-
տայ անզլիացի գերասանուհին անձնասպանութեան
պարագաներուն մասին։

Օգոստոս 24ին 0.քսֆօրտ փողոցի 52 թիւ տունին
մէջ մեռած գտնուեցաւ ծանօթ գերասանուհի Օր.
Փէճի Սքօթ։ Ոստիկանութեան կողմէ կատարուած
քննութիւնները հաստատած են, որ 27 տարեկան այս
արուեստագիտուհին անձնասպանութեան պատճառը
Վալանթինոյի մահն է։ Օր. Սքօթի գոյքերուն մէ-
ջէն գտնուած է նամակ մը, որ սա տողերը կը պա-
րունակէ։

« Ծուտովֆս, առանց քեզի չեմ կրնար ապրիլ, ես
կը նմանիմ թիթենիկի մը, որ կը սիրէ լուսաշող

արեգակին կիզիչ ձառագայթներուն մէջ լողալ . . .
աւա՛ղ, մթագնեցաւ Արիւս . . . թիթենիկը ի՞նչպէս
կրնայ ապրիլ առանց լոյսի . . . աշխարհի վրայ քեզմէ
զատ ոչինչ ունէի, քեզ կորոնցնելէ յետոյ կեանքը
ալ անտանելի է . . . կ'ուզեմ միշտ քովդ գտնուիլ»։
Աւրիշ թուզթի կաոր մը, նոյնպէս գտնուած Օր.
Սքօթի տունէն, կ'ըսէ։

« Միթիոնաւոր սիրակը զայն կը սիրեն, կ'ըսէին.
ո՞չ ոք սակայն կրնայ զայն ինծի չափ սիրել . . . չկրցի
սէրս իրեն յայտնել նամակով . . . կ'ուզեմ անձամբ
իր քով երթալ . . . բոլոր գոյքերս աանտիրոջս թող
քլլան։»

Տակաւին յայտնի չէ, թէ ուրիշ երկիրներու մէջ
ալ Օր. Փէճի օրինակին հետեւողներ կա՞ն թէ ոչ։

ՅՈՒՂԱՐԿԱՀՈՐՈՒԹԻՒՆԸ

Վալանթինոյի յուզարկաւորութիւնը նկարագրե-
լով, ամերիկեան թերթերը կ'ըսեն, թէ ան աւելի
շքեզ էր քան նախազան Ռւելունի թաղումը։

Մեռնելէն յետոյ, մարմինը երկու օր ցուցագ-
րուեցաւ ժողովուրդին։ 12 ֆաշիստներ գիշեր ցերեկ
պահակ կը սպասէին իրենց հայրենակցին դադա-
ղին չուրջ։

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ աննախրն-
թաց չուրջ։ Դազաղին առջեւէն կ'երթային ուն-
չապիկաւոր ֆաշիստները, որոնց կը հետեւին 500 քո-
յէճական աղջիկներէ և կիներէ բաղկացեալ խումբ մը
— բոլորն ալ սեւազգեստ, — զազազը կը կրէին Վա-
լանթինոյի մօտիկ ընկերները։ Տուկաս Ֆայպրէնքս,



ԱՅԱՀԱՅԹԻՆ
«Սեփան և Սուսպ» խաղին մէջ

Ճարլո, Հարօլտ Լուի և ուրիշներ։ Փօլա Եէկրի, լաւ լէն կարմրած աչքերով կը հնտեւէր իր սիրականին դագաղին, իր չուրջը՝ ունենալով Սինէմափ ծանօթ աստղերը՝ Մէրի Փիքֆօրու, Նօրմա Թալմած և Վալանթինոյի երկու նախկին կիները։ Յետոյ կուզային Լու Անձէլոսի և Հօրիվուտի շարժանկարի գործարաններու աշխատաւորները, որոնց կը հնտեւէին կառավարութեան ներկայացուցիչները, ստար ներկայացուցիչները և վերջապէս հարիւր հազարաւոր հնտափրիներն ու Վալանթինոյի համակիրները։

Ոինէմայի աշխատաւորները իրենց ձեռքք բոնած էին Վալանթինոյի խոչոր նկարները, որոնք զայն կը ներկայացնէին իր զանազան զերերուն մէջ։ Բառասուն կառքեր կը փախազրէին ծաղկեասակները, Թափօրը, զանազան ձեւերու մէջ լուսանկարուեցաւ շարժանկարիներու կողմէ։

Այսպէս հոգին յանձնուեցաւ Խուտոլի Վալանթինոն, որ աշխարհի ամէնէն զեղեցիկ մարդը կը նկատուէր, և որուն համար միլիոնաւոր կանացի սիրուեր կը բարախէին։





2159

ԳԻՆ 7.50 ԴՐՈՒՅՇ

Անդրանիկ Պալարխա, Պիլլուս Փողոց թի. 10
«ՄԻԱՅԻՆ» ՍՍԸՆԱՑԱՐ

Ամէն տեսակ յանձնաբարութեան համար դիմել կեզ-
կանառեղին:

0011073

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0011073

